

ժայռերու փլածներուն մէջ ճոխ բուսակա-
նութիւն մը կը գտնուի: Աննդեւ սաստիկ
կիզիւ ամառ մը կ'այրէ և փոշի կը դարձունէ
դաշտավայրը, այս տեղ գարունն իւր բոլոր
գեղեցկութեամբ և դալարութեամբ կը ծաղ-
կի: Կը տեսնուին այրեծաղիկք, զանգակա-
ծաղիկք ամէն մեծութեամբ և գոյներով: Հըս-
կայ բաղրիւկ, և զանազան տեսակ խաչ-
խաչք: Վայրիւշ դեղնագոյն ակքանք: Երձ-
արմատք, վայրի վարդենիք և շահգորմաք, և ուրիշ զանազան տեսակ ծաղիկներ, որոցմով
բուսաբան մը յիշաւի կրնայ շատ գոհ ըլ-
լալ և իրեն ուսումնասիրութեան առարկայ
ընել: Ամէն վայրկեան վար կ'իջնեմ և կը
քաղեմ անոնցմէ: Այս արևոտ և ծաղկալիւր
ճամբուն տեսիլն, յետ ցուրտ մէգերուն բարձր

սարահարթի՝ որոնց խոտերուն մէջ միայն
Օճի-սխտոր (gentiane, բոգ) կոչուած ծա-
ղիկներն կը տեսնուէին, յիշաւի աչքերնիս
և սրտերնիս կը զուարթացնէր: Կ'ուզէի ես
մեր երազ ընթացքը փոքր ինչ դանդաղել,
որ աւելի երկար ժամանակ վայելեմ այն
տեսարանը, սակայն անողոք ժամանակն կը
փութացնէր զմեզ: Կառապանն թէ՛ ձայնով
և թէ՛ խորագանով կը վազցընէ իրեն ձիերը-
կենդանիներն կատղած կ'երագեն իրենց քայ-
լերը՝ առանց արգելներուն ուշ զնելու: Կառ-
քին բոժոժներն այլ կ'երագեն իրենց դաշ-
նակաւոր եղանակը, և մենք փոթորկի նման
կ'անցնինք ակնախտիդ երկու կարգ վայրերի
ծաղկանց միջէն:

Շարայարեկի

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

Արարատի փետրուարի թերթին մէջ (յէջ
100) Յաղագս ամսոց և նշանաց գրքին մի
քանի մթին կէտերը բացատրութեան կարօտ
կը համարուէր, որոց մէջ գլխաւորապէս կըս-
փախք և « և փիկոս » բառերը, և թոյլ կը
տուէր « Լրացնելու թերին և ուղղելու վրի-
պակները »: Այդ թողաւորութեան վրայ յի-
ցեալ՝ հետեւեալ զիտողութիւնը կ'ընեմ:

Նախ և առաջ, մեր մատենադարանին օրի-
նական փոխանակ այդ երկու բառերուն՝ կըս-
փախք և փիկոս, կը ղնէ հաւատարապէս եր-
կու տեղն այլ կեփիկս. և հաւանական է որ
ստուգագոյն լինի վերջինս, մանաւանդ եթէ
երկրորդ կի տեղ կարդանք մ' որով կեփիկս:
վասն զի յունարէն աղփոյն (սեռ. աղփոյնոս)
կը նշանակէ իշամեղոս, բրեւ, և կամ ան-
գործ մեղոս, ինչպէս թարգմանուած է ի
նախնեաց (Ոսկ. Թ. Ա. 16). իսկ փիկոս,
յուն. փուկոս, կը նշանակէ ընդհանրապէս
անգոյր, մամռոս: Թերեւս շփոթուած լինի և
սփիկս (յուն. սփիկ-դիւս) բառին հետ, որ
կը նշանակէ նմանապէս իշամեղոս: պիծակ,
ճիւստաց, իսկ եթէ առարկէ որ, թէ հե-
ղինակն բաշտան կամ հառիկ կը կոչէ զայն,
պատրաստ է Ս. Գրոց վկայութիւնն՝ ուր
բաշտան կը կոչուի մեղուն. « Ի թաշտան փոքր
է մեղուն » (Սիր. ժա. 3):

Դարձեալ, փոխանակ պապիք բառին (Ա-
րարատ. էջ 103, ԿԳ, 152) « Յորժամ պա-
պիք ի ծովէ ելանեն » և այլն, մեր օրի-
նական ունի պապիկք. անստույգ և տարակու-
սականք են երկուքն այլ. այդ բառին մեր-
ձաւոր յունարէն πᾶππος բառը կայ միայն,
որ կը նշանակէ « նորաբոյս կամ աղուամաղ
փետուր (թաշիկ) »: Շատ քաջբշտած մեկնու-
թիւն պիտի լինէր, եթէ այդ բառով ուղէինք
հասկնալ ընդհանուր իմաստով ձագռանք (թըռչ-
նոց). իբր πᾶππος (պապիկք), նորաբոյս
փետուր ունեցող, դեռաքոռնիկ: Այդ կտորը
մեր օրինակն ամբողջապէս այսպէս ունի.
« Յորժամ պապիկք ի ծովէ ելանեն զմի-
մեամք բազում նմանութեամբ որպէս որ
յորիշոյսստուռեղ (?) փոշի ելանէ, զհողմ
նշանակէ »: — « Յորժամ աղաղանք ձայն
առնեն », և այլն. (ԿԴ, 164). մեր օ-
րինակն գրէ աղաղանք: — Մեր օրինակին
մէջ կը պակասին աղաղանք և ձկնքաղք
բառերը (ԿԶ, 174). բայց մերս աւելի ունի
հետեւեալը. « Յորժամ փոքրկունք ամենայն յա-
մուր տեղին և ի ծառոց ծակս և ի բոցն իւ-
րեանց մտանեն, զմեռնային հողմն նշանակէ »:

Խ.